



ՁԵԿՈՒՅՑ

«Կայուն զարգացում Արցախից բռնի տեղահանված անձանց համար. առաջիկա հնարավորություններ» խորագրով համաժողովի Երևան, Փետրվարի 25, 2025 թ.

«Բռնի տեղահանված անձանց զբաղմունակություն և արժանապատիվ աշխատանք» և «Բռնի տեղահանված անձանց համար մատչելի բնակարան և տնտեսական կայունություն» պանելային քննարկումների արդյունքների ամփոփում. խնդիրներ և լուծումների առաջարկություններ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համալերքստեղծում.....	2
Համաժողովի անհրաժեշտությունը.....	3
Համաժողովի հիմնարար սկզբունքները.....	3
Քննարկված մարտահրավերները.....	3
ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՍԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	3
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	4
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ.....	4
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՑԵՐԸ.....	5
ԱՅԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ.....	5
Քննարկումից բխող առաջարկություններ.....	5
ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ.....	5
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԼԱՎԱՐԿՈՒՄ.....	6
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ.....	6
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ.....	7
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	7
Հիմնական ուղենիշներ միջազգային հաջողված փորձից՝ տեղահանված անձանց ինտեգրման և աջակցության ծրագրերի համար.....	8

Համատեքստ

Մինչև 2020 թվականի պատերազմի սկսվելը Լեռնային Ղարաբաղում աշխատունակ բնակչությունը կազմում էր **107,800** մարդ, որոնցից **68,000**-ը (63.1%) համարվում էին աշխատուժի մաս: Աշխատողների **55.5%**-ը ներգրավված էր հանրային հատվածում, ներառյալ՝ կրթությունը, առողջապահությունը և պաշտպանությունը, մինչդեռ մասնավոր հատվածում գերակշռում էին առևտուրը, շինարարությունը և արտադրությունը:

Պատերազմի հետևանքով տեղի ունեցած տեղահանությունն էականորեն փոխել է աշխատուժի կառուցվածքն ու քանակական ցուցանիշները: Մոտ **113,000** արցախցի տեղափոխվել է Հայաստան, որոնցից շուրջ **68,000**-ը գտնվում է աշխատունակ տարիքային խմբում: 2023 թ. սեպտեմբերից մինչև 2025 թ. հունվար նրանցից մոտ **29,000-ը գրանցվել է որպես աշխատող**: Ընդ որում, տեղահանվածների 82%-ը բնակվում է Երևանում և հարակից մարզերում, որտեղ կենտրոնացած է աշխատատեղերի մեծ մասը:

2025 թ. փետրվարի 14-ի դրությամբ 9,821 տեղահանված աշխատանք փնտրող գրանցված է եղել ՄՍԾ տարածքային կենտրոններում, որոնցից 3,414-ը՝ գործազուրկի, իսկ մնացածը՝ նոր աշխատանք փնտրողի կարգավիճակով: Այս տվյալները վկայում են, որ տեղահանված անձանց մի մասն իրենց կենսապահովման նպատակով հաճախ ստիպված է ընդունել այնպիսի աշխատանքների առաջարկներ, որոնք չեն համապատասխանում նրանց մասնագիտական որակավորումներին կամ նախասիրություններին: Այս միտումը հաստատվում է նաև Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) աշխատաշուկայի հետազոտությամբ, որի համաձայն զբաղվածների մոտ 40 %-ը ներգրավված է սեզոնային կամ ժամանակավոր աշխատանքներում:

Տեղահանվածների կողմից բիզնես գործունեությամբ զբաղվելը դիտարկվում է որպես զբաղվածության այլընտրանքային տարբերակ: Չնայած առկա մարտահրավերներին՝ ՀՀ-ում 1,415 արցախցի արդեն գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր: Այնուամենայնիվ, նրանք բախվում են մի շարք խոչընդոտների, այդ թվում՝ ֆինանսական սահմանափակումների, հմտությունների պակասի և ՀՀ շուկայի առանձնահատկությունների վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածությամբ:

Ինչ վերաբերում է բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովմանը, 2023 թ. սեպտեմբերից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակել և իրականացնում է «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության» ծրագիրը: Վերջինիս շրջանակում գործում է հիփոթեքային վարկավորման մեխանիզմը. շահառուներին տրամադրվում է բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու, կառուցելու կամ գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն: 2025 թ. փետրվարի 25-ի դրությամբ 680 դիմումատուներից միայն մոտ 30-ն են իրացրել իրենց հավաստագրերը, որոնցից 12-ի գործարքները հաստատվել են նոտարական վավերացմամբ:

Չնայած բնակարանային ապահովման ծրագրի միջոցով բազմաթիվ ընտանիքների աջակցություն ցուցաբերելու կարևոր նպատակին, դրա իրականացման ընթացքում նկատվում են մի շարք մարտահրավերներ: Մասնավորապես, շահառուների և փորձագիտական համայնքի շրջանակում կա որոշակի ընկալում, որ հավաստագրերի գնային արժեքը միշտ չէ, որ համապատասխանում է շուկայական պայմաններին: Սրա հետևանքով շահառուները դժվարանում են գտնել համապատասխան գույք կամ ստիպված են լինում լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներդնել: Վարկավորման գործընթացում առկա իրավական կարգավորումները, պահանջվող փաստաթղթերի համալիր փաթեթները, ինչպես նաև վարկունակության խիստ բնորոշվող պահանջները որոշ շահառուների համար ստեղծում են ծրագրից օգտվելու դժվարություններ: Բացի այդ, բնակարանային

ապահովման և սոցիալ-տնտեսական ինտեգրման միջև կապի անհստակությունը սահմանափակում է ընտանիքների կայուն կենսապայմանների ձևավորման հնարավորությունները:

Համաժողովի անհրաժեշտությունը

Մեկ ու կես տարի է անցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանումից: Սակայն շարունակվում են արդիական մնալ արցախցիների հիմնախնդիրներն ու մարտահրավերները:

Այս ժամանակահատվածում ՀՀ կառավարության և 100-ից ավելի կազմակերպությունների կողմից տարբեր ուղղություններով բազմաթիվ ծրագրեր ու միջոցառումներ են իրականացվել՝ հումանիտար օժանդակությունից մինչև զբաղվածություն և բնակապահովում: «Սովորիր և վաստակիր. Արցախ» ծրագիրն այս ուղղությամբ իրականացված ծրագրերից մեկն էր¹: Կարևորելով ծրագրից քաղած դասերն ու ձեռքբերումները, հետագա անելիքները ՀՀ կառավարության և շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկելու գաղափարը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), HEKS/EPER կազմակերպության հետ համատեղ, նախաձեռնել էր համաժողով՝ «**Կայուն զարգացում Արցախից բռնի տեղահանված անձանց համար. առաջիկա հնարավորություններ**» խորագրով: Մեկօրյա համաժողովի ընթացքում երկխոսության հարթակ ձևավորվեց շահագրգիռ բոլոր կողմերի միջև: Համաժողովին ներկա էր ավելի քան 120 մասնակից՝ ՀՀ Ազգային ժողովից, ՀՀ Կառավարությունից, Լեռնային Ղարաբաղի համայնքի առաջնորդներից, միջազգային կառույցներից և հասարակական սեկտորից:

Համաժողովի հիմնարար սկզբունքները

Գործակցություն. համաժողովը միևնույն նպատակի շուրջ էր համախմբել շահագրգիռ բոլոր կողմերին՝ քաղաքականության մշակման և ծրագրերի իրականացման համար պատասխանատուներին, դոնոր կառույցներին, Լեռնային Ղարաբաղի համայնքի ներկայացուցիչներին:

Մասնակցայնություն. համաժողովի աշխատանքներում, թեմատիկ քննարկումներում մասնակից կողմերի հավասար ներգրավվածությունն ապահովվել է որոշում կայացնողների, ղեկավարների և առաջնորդողների ներկայացմամբ:

Անկախություն. համաժողովը բացառում է որևէ քաղաքական, գաղափարական, տնտեսական կարգի կողմնակալություն և միջամտություն:

Քննարկված մարտահրավերները

Բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման և զբաղվածության ոլորտներում իրականացվող ծրագրերը հանդիպել են մի շարք ընդհանրական մարտահրավերների, որոնք ներկայացված են ստորև.

ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՑ ԴԱՍԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բնակարանային ապահովման և զբաղվածության նախորդ ծրագրերը ցույց են տվել, որ առանց համալիր միջոլորտային վերլուծության իրականացված նախաձեռնությունները հաճախ բախվում են գործնականում կիրառելիության խնդիրների, կրկնում են նախկին սխալները և չեն ապահովում

¹ Ծրագրի մասին տես ՀԲԸՄ պաշտոնական կայքէջում՝ <https://agbu.am/leap>

երկարաժամկետ կայուն լուծումներ: Պետական ու մասնավոր նախաձեռնություններն ունեն համակարգման բացեր, ինչը խոչընդոտում է արդյունավետ աջակցության տրամադրմանը:

Ընդհանուր առմամբ, բնակարանային ապահովումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես կացարանի տրամադրման գործընթաց, այլև՝ որպես երկարաժամկետ տնտեսական և սոցիալական ինտեգրման հնարավորություն: Բռնի տեղահանված անձանց համար կայուն կենսապայմանների ապահովումը պահանջում է նաև տեղում աշխատանքի հնարավորությունների ընդլայնում, կրթական և մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացում, ինչպես նաև ենթակառուցվածքների համապատասխան զարգացում:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը որոշ դեպքերում չի համապատասխանում իրական գների մակարդակին, հատկապես այն համայնքներում, որտեղ բնակարանների շուկայական միջին գները գերազանցում են տրամադրվող միջոցները: Սա կարող է բարդացնել ընտանիքների կողմից համապատասխան բնակարանի ընտրությունը և հանգեցնել լրացուցիչ ֆինանսական բեռի:

Նմանատիպ իրավիճակ է նաև զբաղվածության ծրագրերում, որտեղ առաջարկվող աշխատավարձերի անհամապատասխանությունը ևս լուրջ մարտահրավեր է, քանի որ պայմանները հաճախ չեն բավարարում շահառուների տնտեսական կարիքները: Տեղահանված անձինք հաճախ ծանոթ չեն Հայաստանի աշխատաշուկայի պահանջներին և առանձնահատկություններին, որոնք զգալիորեն տարբերվում են ԼՂ աշխատաշուկայից: Նրանց հմտություններն ու մասնագիտական որակավորումները միշտ չէ, որ համահունչ են գործատուների պահանջներին, մինչդեռ որակյալ վերապատրաստման հնարավորությունները, հատկապես մարզերում, բավարար չեն:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում քաղաքացիության պարտադիր պահանջը որոշ շահառուների համար ընկալվում է որպես լրացուցիչ խոչընդոտ պատերազմից և բռնի տեղահանումից հետո առաջացած սոցիալ-հոգեբանական ընկալումների պատճառով: Բացի այդ, քաղաքացիության ընդունման ընթացակարգերը կարող են երկարատև լինել: Քաղաքացիության բացակայությունը որոշ չափով սահմանափակում է նաև զբաղվածության ծրագրերից օգտվելու հնարավորությունները:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մշտական բնակության բացակայությունը, սոցիալական ու հոգեբանական դժվարություններն էականորեն խոչընդոտում են կայուն զբաղվածության և բնակարանային ապահովման գործընթացներին: Տեղահանված անձանց սոցիալական կապերի սահմանափակությունը, հոգեբանական անհարմարության զգացողությունը, անորոշությունը և մոտիվացիայի պակասը դժվարացնում են նրանց ինտեգրման գործընթացը և երկարաժամկետ կարիերային ու սոցիալական կայունության հաստատումը:

Բնակարանային և զբաղվածության ապահովումը հաճախ դիտարկվում են որպես առանձին խնդիրներ, առանց հաշվի առնելու դրանց փոխադարձ ազդեցությունը: Արդյունքում բացակայում է սոցիալ-տնտեսական համալիր մոտեցումը, որը թույլ կտար շահառուներին կայուն կերպով ինտեգրվել: Բնակարանի տրամադրումը կամ աշխատանք գտնելն ինքնին բավարար չեն շահառուների երկարաժամկետ սոցիալական ինտեգրման համար, քանի որ անհրաժեշտ

ենթակառուցվածքային, կրթական և մասնագիտական զարգացման հնարավորությունները սահմանափակ են:

Աջակցության ծրագրերում հաճախ բացակայում է անհատականացված մոտեցումը, որը կանդրադառնար յուրաքանչյուր շահառուի մասնագիտական և սոցիալական առանձնահատկություններին: Նույնիսկ այն դեպքերում, երբ տրամադրվում են նյութական ռեսուրսներ, բնակարան և աշխատատեղեր, լիարժեք ինտեգրումը չի երաշխավորվում:

ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՑԵՐԸ

Տեղահանված անձինք հաճախ պատշաճ տեղեկացված չեն իրենց համար նախատեսված ծրագրերի և հնարավորությունների մասին, ինչը նվազեցնում է ծրագրերի արդյունավետությունը: Պետական և մասնավոր կազմակերպությունների միջև կապերի համակարգման բացերը հանգեցնում են աջակցության միջոցների ոչ արդյունավետ օգտագործման, ծրագրերի կրկնության և որոշ խմբերի ոչ բավարար ներգրավման:

Որոշ դեպքերում ծրագրերը մշակվում են առանց շահառուների կարիքների համապարփակ գնահատման, ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել տեղահանվածների մեկուսացված խմբերին, որոնք, ի տարբերություն ակտիվ և ինտեգրված շահառուների, ավելի քիչ են տեղեկացված առկա հնարավորությունների մասին և բախվում են սոցիալական ինտեգրման խոչընդոտների:

ԱՅԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում վարկավորման ներկայիս մեխանիզմները, ինչպես նաև նոտարական և կադաստրային լրացուցիչ ծախսերը, ապահովագրության պահանջը, վարկային պատմության ազդեցությունը և այլ ֆինանսական սահմանափակումներ կարող են սահմանափակել շահառուների լայն մասնակցությունը ծրագրին: Վարկունակության չափանիշները դառնում են բարդ հաղթահարելի արգելք, հատկապես, եթե շահառուները չունեն բավարար ֆինանսական երաշխիքներ: Բիզնես գործունեություն սկսելու համար ևս առկա են ֆինանսական սահմանափակումներ, որոնք զուգակցվում են շուկայի առանձնահատկությունների վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածության հետ:

Տեղահանված անձինք բախվում են ֆինանսական և հոգեբանական լուրջ մարտահրավերների, որոնք խոչընդոտում են կարիերայի երկարաժամկետ պլանավորմանը: Նրանք հաճախ չեն կարողանում ճիշտ գնահատել իրենց մասնագիտական ներուժը և աշխատաշուկայի հնարավորությունները, ինչի պատճառով կարևոր հնարավորություններ բաց են թողնվում: Բացի այդ, որոշ դեպքերում սոցիալական բևեռացումը խոչընդոտ է դառնում նրանց ամբողջական ինտեգրման համար:

Բնակարանային ապահովման ծրագրերում համայնքային համախմբվածության գործոնը կարևոր նշանակություն ունի: ԼՂ հայության սոցիալ-մշակութային ժառանգության և ինքնության պահպանման նպատակով կարելի է դիտարկել համայնքային մոտեցմամբ բնակելի թաղամասերի կառուցման գաղափարը: Թաղամասերի կառուցումը կնպաստի նրանց սոցիալական ներգրավվածության և փոխօգնության մշակույթի պահպանմանը:

Քննարկումից բխող առաջարկություններ

ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Համաժողովի ամփոփագիրը չի արտացոլում ՀԲԸՄ-ի կամ համաժողովը կազմակերպող այլ կազմակերպությունների տեսակետները, և ՀԲԸՄ-ն ու համաժողովը կազմակերպող այլ կազմակերպությունները չեն կարող պատասխանատվություն կրել դրա բովանդակության համար:

Անհրաժեշտ է մշակել ներկայացուցչական տվյալների հավաքագրման մեխանիզմ, որը կփոխառի միջազգային հաջողված փորձը (օրինակ՝ Հորդանանում սիրիացի տեղահանվածների վերաբերյալ ընտրանքային տվյալների հավաքագրման մոդելը): Այս մեխանիզմը պետք է ներառի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև վարքաբանական ցուցանիշներ նպատակային քաղաքականությունների և ծրագրերի արդյունավետության գնահատման ու բարելավման համար:

Տեղահանվածների աջակցության ծրագրերի արդյունավետ համակարգման համար անհրաժեշտ է ստեղծել պետական համակարգող մարմին, որը կգործի տվյալահեն գործիքակազմի հիման վրա: Այն կհամակարգի տարբեր կազմակերպությունների ջանքերը՝ խուսափելու ծրագրերի կրկնությունից և ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխումից: Ավելին, անհրաժեշտ է ներդնել համապարփակ մշտադիտարկման և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԼԱՎԱՐԿՈՒՄ

Աջակցության ծրագրերում ցանկալի է կիրառել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով տեղահանվածների կարիքներն ու պայմանները: Այս նպատակով կարելի է մշակել և ներդնել թվային հարթակ՝ միջազգային լավագույն փորձի (օրինակ՝ Շվեյցարիայի Path2Work համակարգի) հիման վրա: Հարթակը պետք է ապահովի աշխատանքային առաջարկներ անհատական հմտությունների և փորձի հիման վրա, ինչպես նաև տրամադրի հոգեբանական աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն:

Տեղահանվածների աջակցության ծրագրերից հիմնականում օգտվում են ակտիվ շահառուները, մինչդեռ մեկուսացված և սոցիալական կապեր չունեցող անձինք հաճախ դուրս են մնում աջակցության դաշտից: Նրանց ներգրավման համար անհրաժեշտ է ներդնել նպատակային մեխանիզմներ, ինչպիսիք են տնային այցերը անհատական մոտեցման ապահովման և աջակցող ծառայությունների հասանելիության բարձրացման նպատակով:

Վերապատրաստման ծրագրերի պարագայում, որպես վերջնանպատակ, պետք է սահմանվի շահառուների զբաղվածության խնդրի լուծումը: Դասընթացները պետք է կազմակերպվեն այնպես, որ դրանք նպաստեն մասնակիցների մասնագիտական աճին և տնտեսական ինտեգրմանը, ավարտից հետո մասնակիցները որոշակի ժամանակահատվածում ստանան աշխատանքային հնարավորություններ: Զբաղվածության ապահովումը պետք է լինի կրթական ծրագրերի վերջնարդյունքի գնահատման հիմնական բաղադրիչը:

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում ցանկալի է դիտարկել տնտեսական հաշվարկների միջոցով բնակարանային հավաստագրերի գումարային սահմանաչափերի վերանայում՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ համայնքների անշարժ գույքի շուկայական իրավիճակին: Առաջարկվում է դիտարկել ընտանիքների տարբերակված սոցիալ-տնտեսական կարիքների վրա հիմնված լրացուցիչ ֆինանսական աջակցության մեխանիզմների մշակում՝ կենսաապահովման նախաձեռնությունների համար: Եթե բնակարանի գնման դեպքում աջակցությունից մնում է չօգտագործված գումար, նաև կարելի է դիտարկել այն փոքր բիզնեսի զարգացմանն ուղղելու հնարավորությունը՝ ծրագրի տնտեսական ազդեցությունը մեծացնելու համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՐԶԵՑՈՒՄ

Առաջարկվում է դիտարկել քաղաքացիության պարտադիր պահանջի մեղմացում կամ հարմարեցում, օրինակ՝ բնակարանի սեփականության իրավունքը քաղաքացիություն ստանալուց հետո որոշակի ժամկետում տրամադրելու պայմանով:

Համաժողովի ամփոփագիրը չի արտացոլում ՀԲԸՄ-ի կամ համաժողովը կազմակերպող այլ կազմակերպությունների տեսակետները, և ՀԲԸՄ-ն ու համաժողովը կազմակերպող այլ կազմակերպությունները չեն կարող պատասխանատվություն կրել դրա բովանդակության համար:

Ցանկալի է դիտարկել վարկավորման պայմանների մեղմացում, մասնավորապես, վարկունակության ավելի ճկուն պահանջներ՝ հաշվի առնելով շահառուների՝ բռնի տեղահանման հանգամանքով պայմանավորված առանձնահատկությունները: Առաջարկվում է դիտարկել լրացուցիչ ծախսերի (նոտարական, կադաստրային, ապահովագրություն) մասնակի կամ ամբողջական սուբսիդավորում՝ ելնելով շահառուների խոցելիության աստիճանից՝ նրանց ֆինանսական բեռը նվազեցնելու նպատակով:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Առաջարկվում է դիտարկել բնակարանային ապահովման ծրագրերը գործարարության զարգացման, մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության ապահովման նախաձեռնությունների հետ կապակցելը, ինչպես նաև համայնքային զարգացումը խթանող ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը՝ հաշվի առնելով կրթական, առողջապահական և տնտեսական գործոնները:

Աջակցության ծրագրերը պետք է ներառեն համապարփակ մոտեցում՝ ընդգրկելով ինչպես բնակարանային, այնպես էլ հոգեբանական աջակցություն: Դասընթացներով պետք է շեշտը դրվի ոչ միայն տեխնիկական հմտությունների վրա, այլև շահառուների անձնային աճի՝ բարձրացնելով նրանց ինքնավստահությունը, ձևավորելով հոգեբանական կայունություն և ստեղծելով աջակցող միջավայր՝ կայուն զբաղվածություն ունենալու համար:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ծրագրերի արդյունավետության նախնական գնահատման համար նպատակահարմար է իրականացնել տարբեր ձևաչափերով փորձնական նախագծեր: Պիլոտային փուլում ձեռք բերված տվյալները կօգնեն ընտրել առավել հաջողված մոդելները և դրանք կիրառել լայնամասշտաբ ծրագրերում:

Բացի այդ, տեղահանվածներին կարելի է ներգրավել որպես դասընթացավարների կամ խորհրդատուների, ինչը կապահովի հաղորդակցության ավելի արդյունավետ մոդել՝ հիմնված ընդհանուր փորձառությունների վրա:

Առաջարկվում է դիտարկել համայնքային բնակարանային ծրագրերի մշակում ԼՂ-ից տեղահանված համայնքների սոցիալական կապերի պահպանման համար: Ծրագրերը կներառեն ընդհանուր տարածքներ, ծառայություններ և զարգացման հնարավորություններ:

Առաջարկվում է նաև դիտարկել սոցիալական բնակարանների մատչելի վարձակալության պետական ծրագրի մշակումը՝ որպես միջանկյալ լուծում, մինչև շահառուների սեփական բնակարանային ապահովումը կամ դրան զուգահեռ այլընտրանքային լուծում:

Հիմնական ուղենիշներ միջազգային հաջողված փորձից՝ տեղահանված անձանց ինտեգրման և աջակցության ծրագրերի համար

Հաշվի առնելով բռնի տեղահանված անձանց զբաղվածության և բնակարանային ապահովման միջազգային փորձը՝ մասնավորապես Սերբիայի, Վրաստանի, Ուկրաինայի և Կոլումբիայի օրինակները, առանձնացվել են մի շարք կարևոր դրույթներ, որոնք կարող են ծառայել որպես ուղեցույց Հայաստանում իրականացվող ծրագրերի համար:

Թիրախավորման ճշգրիտ և խելամիտ մոտեցում

Մտերմաբան է թիրախային խմբերի հստակեցում՝ հաշվի առնելով ընտանիքների կազմը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը, բնակավայրի ընտրության նախապատվությունները, ինչպես նաև տեղափոխման և ինտեգրման ցանկությունը: Սա թույլ կտա աջակցության միջոցները նպատակային դարձնել և առավելագույնս արդյունավետ օգտագործել, ինչպես նաև ապահովել մեկուսացված և սոցիալական կապեր չունեցող անձանց ներգրավում առկա ծրագրերում:

Բազմակողմանի սոցիալ-տնտեսական ինտեգրում

Բնակարանային ծրագրերը պետք է համադրվեն տնտեսական հնարավորությունների ստեղծման հետ՝ ներառելով բիզնես-դրամաշնորհներ, ձեռնարկատիրական վերապատրաստման դասընթացներ, մենթորության ծրագրեր, փոքր բիզնեսի զարգացման աջակցություն և տեղական ենթակառուցվածքների բարելավում: Այս մոտեցումը կնպաստի ընտանիքների ոչ միայն նյութական, այլև սոցիալ-հոգեբանական կայունացմանը՝ ապահովելով երկարաժամկետ ինտեգրում:

Ճկուն ֆինանսավորման մեխանիզմներ

Միջազգային փորձը վկայում է, որ բնակարանային հավաստագրերի, վարկերի կամ այլ ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացը պետք է լինի պարզ, արագ և ճկուն: Անհրաժեշտ է վերանայել ներկայիս իրավական կարգավորումները, նվազեցնել լրացուցիչ ծախսերն ու բյուրոկրատական խոչընդոտները, ինչպես նաև հարմարեցնել ֆինանսական աջակցության չափը իրական շուկայական իրավիճակին և շահառուների կարիքներին:

Համայնքների ներգրավում և տեղում համագործակցություն

Բնակարանային և զբաղվածության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում տեղահանված անձանց ներգրավումն էականորեն բարձրացնում է ծրագրերի արդյունավետությունն ու շահառուների գոհունակությունը: Հարկավոր է ապահովել շահառուների մասնակցությունը ոչ միայն ծրագրերի իրականացման, այլ նաև դրանց նախնական պլանավորման փուլում՝ հաշվի առնելով նրանց կարծիքն ու առաջարկները:

Համակարգված համագործակցություն և թափանցիկ հաղորդակցություն

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարբեր դերակատարների՝ պետության, միջազգային կազմակերպությունների, հասարակական կառույցների և մասնավոր հատվածի համակարգված համագործակցությունը, ինչպես նաև թափանցիկ ու հստակ տեղեկատվության տրամադրումը՝ էապես բարձրացնում է ծրագրերի արդյունավետությունը: Այս նպատակով տեղեկատվության կառավարման և համակարգման թվային գործիքների ներդրումը թույլ կտա բարելավել պետական և ոչ պետական դերակատարների միջև համագործակցությունը, ինչպես նաև կավելացնի շահառուների հասանելիությունը ծրագրերին: